Յոթերորդ հաղորդում

Տաճարի նյութերի խորքային նշանակությունը

Գրվածքների ընթերցում. Գ Թգ 5:15-18, 6:7, 9-10, 15-16, 23, 31-34, 36, 7:14-15, 21

I. Աստծու կառույցի համար նյութեր դառնալու համար մենք պետք է փորձառաբար ապրենք Քրիստոսին Իր մահվան մեջ (նոճիով խորհրդապատկերված), Քրիստոսին Իր հարության մեջ (մայրիով խորհրդապատկերված), և Քրիստոսին՝ որպես Հոգուն (ձիթենու փայտով խորհրդապատկերված).

Ա. Խաչված և հարուցանված Քրիստոսը՝ Հիսուս Քրիստոսի համաբովանդակ Հոգին և պատրաստված Եռամեկ Աստծու ներկայությունը, եկեղեցու՝ որպես Աստծու տաճարի կառուցման նյութերի իրականությունն է՝ Քրիստոսի մեծացման և ընդարձակման համար՝ 3:9, 12ա, 16-17:

Բ. Մենք պետք է թույլ տանք խաչված և հարուցանված Քրիստոսին՝ որպես Հոգու, ներկառուցվել մեր էության մեջ, որպեսզի կարողանանք ունենալ Քրիստոսի լիակատար ուրախությունը, որպեսզի եկեղեցու՝ Աստծու տաճարի կառուցման համար լինենք Աստծու տարատեսակ շնորհքի (կյանքի հարուստ մատակարարման) լավ տնտեսվարներ՝ Եփս 3:2, 17, Ա Պտ 4:10-11:

II. Նոճին խորհրդապատկերում է խաչված Քրիստոսին՝ Գ Թգ 6:15բ, 34, հմմտ Ծնդ 6:14.

Ա. Հին ժամանակներում հրեաներն իրենց գերեզմանների վերևում նոճիներ էին տնկում. հետևաբար նոճին խորհրդապատկերում է Քրիստոսի մարդկայնությունն Իր մահվան մեջ՝ խաչված Հիսուսին՝ Ա Կրթ 2:2:

Բ. Տաճարի դռները պատրաստված էին նոճու փայտից, և դրանց վրա քերովբեներ ու արմավենիներ էին փորագրված՝ Գ Թգ 6:34-35, հմմտ Եզկ 41:18-20.

1. Քերովբեները խորհրդապատկերում են Տիրոջ փառքը, որը դրսևորվում է արարածների վրա (10:18, Եբր 9:5), իսկ արմավենիները՝ Քրիստոսի հաղթանակն ու հավիտենական, մշտագո զորությունը՝ Եզկ 40:16, Հյտ 7:9:
2. Այն, որ նոճու փայտից դռների վրա ամավենիներ և քերովբեներ էին փորագրված, նշանակում է, որ Քրիստոսի հաղթանակն ու Տիրոջ փառքը չարչարանքների միջոցով «փորագրվել» են մեր էության մեջ՝ Գրծ 16:7, Փլպ 3:10, Բ Կրթ 4:10-12:

III. Մայրին խորհրդապատկերում է հարություն առած Քրիստոսին՝ Գ Թգ 6:9-10, 15-16, 36.

Ա. Մայրիներն աճում էին Լիբանանի լեռներում. այսպիսով՝ մայրին խորհրդապատկերում է Քրիստոսի մարդկայնությունը հարության մեջ՝ հարուցանված Քրիստոսին՝ Սղմ 104:16, Երգ 4:8:

Բ. Հարուցանված ու համբարձված Քրիստոսը՝ որպես Թագավոր, Դավթի

տնից ելած մի վեհաշուք և հոյակապ մայրի է՝ Եզկ 17:22-23, Հռմ 1:3-4, Գրծ 2:22-24, 32-36, Եբր 2:9:

Գ. Մենք պետք է լինենք մարդիկ, ովքեր իրենց արմատները Քրիստոսի մեջ են գցում, ինչպես Լիբանանի մայրիներ, ինչը մեզ կմղի աճելու կյանքում, քանի որ տնկվել ենք Եհովայի տանը, ծաղկում ենք մեր Աստծու գավիթներում, դեռ ծերության ժամանակ էլ պտուղ կտանք և հյութով ու կանաչով լի կլինենք՝ Օվս 14:5-9, Սղմ 92:12-14, Դ Թգ 19:30:

Դ. Եկեղեցին Քրիստոսի հարության զորության պահեստն է և շտեմարանը. երբ այս զորությունը գործեց Քրիստոսի մեջ, Նրան դարձրեց Գլուխը. երբ այս զորությունը գործում է մեր մեջ, մեզ դարձնում է Նրա Մարմինը՝ Եփս 1:19-23, Հռմ 8:2, 11, 12:1-2, Փլպ 3:10:

IV. Ձիթենու փայտը խորհրդապատկերում է փոխակերպված Քրիստոսին՝ որպես կենդանարար Հոգու՝ Գ Թգ 6:23, 31-33, Ա Կրթ 15:45բ.

Ա. Ձիթապտղի յուղը Աստծու Հոգու նախատիպն է. հետևաբար ձիթենու փայտը խորհրդապատկերում է Քրիստոսի մարդկայնությունը Աստծու Հոգու մեջ՝ օծյալ Քրիստոսին, ով նաև բաղադրյալ Հոգին է՝ որպես օծություն՝ Եբր 1:9, Բ Կրթ 1:21, Ա Հվի 2:20, 27, Ելց 30:25, 30:

Բ. Մենք Քրիստոսի ճյուղերն ենք, որոնք պատվաստվել են Նրան՝ որպես մշակված ձիթենու, Նրան վայելելու համար (Հռմ 11:17, 24). կենդանարար Հոգին Քրիստոսի՝ որպես երկնային ձիթենու կենսահյութն է. եթե մենք փափագում ենք հաղորդ լինել Քրիստոսի հարստությանը՝ որպես երկնային ձիթենու պարարտության, հյութի, պետք է շփվենք կենդանարար Հոգու՝ որպես Քրիստոսի կենսահյութի հետ՝ Ղկս 23:31, հմմտ Սղմ 92:13-14, 36:8-9.

1. Քանի որ մենք մեր հոգում ենք պատվաստվել Քրիստոսին, պետք է շարունակաբար վարժենք մեր հոգին. երբ մենք կանչում ենք Տիրոջը՝ ասելով. «Օ՜, Տեր, օ՜, Տեր», մենք վարժում ենք մեր հոգին և անմիջապես հաղորդ ենք լինում Տիրոջը՝ որպես կենդանարար Հոգու՝ Հռմ 8:16, Ա Կրթ 6:17, Հռմ 10:9-13:
2. Քրիստոսի հարստությունը վայելելու մեկ այլ ճանապարհ Աստծու Խոսքը կարդալն ու յուրաքանչյուր խոսքին «ամեն» ասելն է. այսպես մենք վարժում ենք մեր հոգին, հպվում Տիրոջը, վայելում Նրան և հաղորդ լինում համաբովանդակ Հոգուն՝ որպես պարարտության՝ Սղմ 106:48, Նեմ 8:6, Բ Կրթ 1:20, Հյտ 19:4, Եփս 6:17-18:

Գ. Անհրաժեշտ է տեսնել, որ մենք պատվաստված ենք եղել Քրիստոսին՝ «հակառակ բնությանը». «հակառակ բնությանը» նշանակում է «հակառակ մեր «ես»-ին»՝ Հռմ 11:24.

1. Մեր հին բնությանը վերաբերող ամեն ինչ հակադրվում է Տիրոջ բնությանը. մեր բնությունը մեղավոր բնությունն է, իսկ Տիրոջ բնությունն աստվածային, հոգևոր և սուրբ բնությունն է՝ Գղտ 5:16-17, Բ Պտ 1:4:
2. Որպեսզի հաղորդ լինենք Քրիստոսին՝ որպես ձիթենու՝ Նրա հարս-

տությամբ հանդերձ, պետք է լիովին կտրվենք մեր՝ որպես վայրի ճյուղերի հին միջավայրից, հին պատմությունից, հին կյանքից, հին սովորություններից և հին սովորույթներից՝ Հռմ 11:24, հմմտ Եփս 4:22-24:

3. Որպեսզի փորձառաբար ապրենք մեր հին կենցաղավարությունից կտրված լինելը և վայելենք Քրիստոսին պատվաստվելու փորձառությունը, մենք պետք է վարժենք մեր հոգին ու կանչենք Նրա անունը և աղոթքաընթերցենք Նրա Խոսքը՝ Հռմ 10:6-8, Եփս 6:17-18:

Դ. Հռմ 11-րդ գլուխը բացահայտում է, որ մենք Քրիստոսի՝ որպես ձիթենու ճյուղերն ենք (խխ. 17, 24), որպեսզի «ձիթապտուղներ» բերենք ու փափկեցնող յուղ առաջացնենք, որը խորհրդապատկերում է Սուրբ Հոգուն. Հվի 15-րդ գլուխը բացահայտում է, որ մենք Քրիստոսի՝ որպես որթի ճյուղերն ենք (խ. 5), որպեսզի «խաղող» բերենք՝ առույգացնող գինի առաջացնելու համար, որը խորհրդապատկերում է աստվածային կյանքը. իսկ Ղկս 10-րդ գլխում բարի սամարացին մեռնողի վրա յուղ և գինի լցրեց՝ խխ. 33-34.

1. Յուղն ու գինին միասին բժշկություն են դառնում մարդկանց համար. որքան շատ լինենք Տիրոջ մեջ՝ կանչելով Նրան և աղոթքաընթերցելով Նրա Խոսքը, այնքան ավելի շատ «ձիթապտուղներ» ու «խաղող» կբերենք և յուղ ու գինի կառաջացնենք, որպեսզի հեղենք այն մարդկանց մեջ, որոնք ներքուստ վերքեր ունեն, ընկճվել ու հիասթափվել են:
2. Ձիթենու յուղն օգտագործում էին Աստծուն և մարդուն պատվելու համար (Դտվ 9:8-9), ինչը նշանակում է, որ Հոգով քայլողները պատվում են Աստծուն (Գղտ 5:16, 25), և Հոգուն սպասավորողները պատվում են մարդուն (Բ Կրթ 3:6, 8, Փլպ 3:3):
3. Որթի գինին օգտագործում էին Աստծուն և մարդուն ուրախացնելու համար (Դտվ 9:12-13), ինչը նշանակում է, որ Քրիստոսին՝ որպես իրենց զոհաբերող և առույգացնող կյանքի, վայելողներն ուրախացնում են Աստծուն (Մտթ 9:17), և Քրիստոսին՝ որպես իրենց զոհաբերող և առույգացնող կյանքի, սպասավորողներն ուրախացնում են մարդուն՝ Բ Կրթ 3:6, Փլպ 2:17, Բ Տմթ 4:6:

V. Տաճարի սյուները բրոնզից կառուցեցին, ինչը խորհրդապատկերում է Աստծու դատաստանը՝ Գ Թգ 7:14-15, 21, Հյտ 3:12, 21:22.

Ա. Գրվածքներում սյունը նշանն է՝ վկայությունը, Աստծու կառույցի, որն առաջանում է Մարմնի կյանքի կիրարկման մեջ եղող փոխակերպման միջոցով՝ Ծնդ 28:22ա, Գ Թգ 7:15-22, Գղտ 2:9, Ա Տմթ 3:15, Հյտ 3:12, Հռմ 12:2, Եփս 4:11-12:

Բ. Ովքեր Աստծու համար պիտանի են, մշտապես Աստծու դատաստանի տակ են (բրոնզ)՝ գիտակցելով, որ իրենք մսեղիում եղող մարդիկ են, ոչնչի արժանի չեն՝ բացի մահից և թաղումից՝ Սղմ 51:5, Ելց 4:1-9, Հռմ 7:18, Մտթ 3:16-17.

1. Հավատացյալների միջավայրի թե՛ բաժանության, թե՛ անպտղության պատճառն այն է, որ բրոնզ չկա, Աստծու դատաստանից ոչինչ չկա. փոխարենը նրանք հպարտ են, իրենք իրենց են գովում, պաշտպանում են իրենց, արդարացնում են իրենց, ինքնահավան են, ներողամիտ են իրենց հանդեպ, իրենց արդար են համարում, իսկ ուրիշներին դատապարտում են ու կառավարում նրանց՝ հովվելու և փնտրելու փոխարեն՝ 16:24, Ղկս 9:54-55:
2. Երբ մենք սիրենք Տիրոջը և փորձառաբար ապրենք Նրան՝ որպես բրոնզե մարդու (Եզկ 40:3), Նա կդառնա մեր արտասովոր սերը, անսահման երկայնամտությունը, անզուգական հավատարմությունը, բացարձակ խոնարհությունը, առավելագույն մաքրությունը, գերագույն սրբությունն ու արդարությունը և մեր պայծառությունն ու ուղղամտությունը՝ Փլպ 4:5-8:

Գ. Տաճարի սյուների գլուխների վրա «հյուսկեն աշխատանքի ցանցեր կային [ցանկաշարի նման] շղթայական աշխատանքի պսակներով». սրանք խորհրդապատկերում են բարդ և փոխխճճված իրավիճակներ, որոնցում ապրում և պատասխանատվություն են կրում նրանք, ովքեր Աստծու կառույցում սյուներ են (Գ Թգ 7:17, Բ Կրթ 1:12, 4:7-8). սյուների գլուխների գագաթին շուշաններ և նռներ կային՝ Գ Թգ 7:18-20.

1. Շուշանները խորհրդապատկերում են Աստծու հանդեպ հավատքի կյանքը, մի կյանք, որում մենք ապրում ենք այն ամենով, ինչ Աստված է մեզ համար, ոչ թե այն ամենով, ինչ մենք ենք. բրոնզը նշանակում է «ոչ թե ես», իսկ շուշանը՝ «այլ Քրիստոսը»՝ Երգ 2:1-2, Մտթ 6:28, 30, Բ Կրթ 5:4, Գղտ 2:20:
2. Սյուների գլուխների պսակների վրայի դրված նռները խորհրդապատկերում են Քրիստոսի՝ որպես կյանքի հարստության լեցունությունը, առատությունն ու գեղեցկությունը, ինչպես նաև արտահայտությունը՝ Փլպ 1:19-21ա, Եփս 1:22-23, 3:19:
3. Հյուսկեն աշխատանքի հատման և շղթայական աշխատանքի սահմանափակման միջոցով մենք կարող ենք Աստծուն ապավինելու մաքուր, հասարակ կյանքով ապրել՝ Աստծու՝ կյանքում եղող կառույցի համար արտահայտելով Քրիստոսի աստվածային կյանքի հարստությունը:

VI. Տաճարի քարերը խորհրդապատկերում են Քրիստոսի մարդկայնությունը փոխակերպման մեջ՝ փոխակերպված Քրիստոսին՝ Գ Թգ 5:15-18, 6:7, 36, Ա Մնց 29:2, Բ Մնց 3:6.

Ա. Որպես Աստված՝ Քրիստոսն Իր մարմնացմամբ հագավ մարդկային մսեղի. դառնալով մսեղիում եղող մարդ՝ հին ստեղծագործության մեջ եղող մարդ, Նա պետք է Իր մարդկային մասում փոխակերպվեր՝ Հռմ 1:3-4:

Բ. Այսպիսի փոխակերպված Քրիստոսն այժմ Աստծու կառույցի կենդա-

նի քարն է, հիմնաքարը, անկյունաքարը և վերնաքարը՝ Ա Պտ 2:4, Եսյ 28:16, Ա Կրթ 3:11, Եփս 2:20, Ա Պտ 2:6, Զք 4:7, 3:9, Հյտ 5:6, 4:3, 21:11:

Գ. Տաճարում եղող քարերը նաև խորհրդապատկերում են Քրիստոսի հավատացյալներին, որոնք Քրիստոսի՝ որպես քարի կողմից փոխակերպվել են՝ Մտթ 16:18, Հվի 1:42, Ա Պտ 2:4-7, Հյտ 21:11, 14, 18-21, հմմտ Դնլ 2:34-35, 44-45:

Դ. Նոր Կտակարանը խոսում է կենդանի քարերի մասին (Ա Պտ 2:5), իսկ Հին Կտակարանը՝ կտրված քարերի մասին (Գ Թգ 5:15, 17-18, 6:7). եկեղեցու կառուցման համար օգտագործվող քարերը պետք է ներքուստ կենդանի լինեն և արտաքուստ կտրվեն (ներգործության ենթարկվեն)՝ Բ Կրթ 4:16.

1. Եկեղեցում որոշ եղբայրների և քույրերի կարելի է համեմատել «չմշակված» քարերի հետ՝ քարհանքից թարմ կտրված և սուր ծայրերով լի. երբ շփվում են նրանց հետ, նրանք պատճառ են դառնում, որ մարդիկ վիրավորվեն և անհարմարության զգացում ունենան:
2. Նրանք բավականաչափ կայուն չեն, որպեսզի մյուսների հետ կառուցվեն, կոորդինացվեն և ծառայեն, մյուսների հետ միասին պատերազմ մղեն կամ մյուսների հետ կրեն Տապանակը:

VII. Իրական քրիստոնեական կյանքը եկեղեցու՝ որպես Աստծու տաճարի կառուցման համար խաչված և հարուցանված Քրիստոսի՝ որպես կենդանարար Հոգու կյանքն է, ով ներկառուցվում է մեր էության մեջ, որպեսզի կերպարանվենք Նրա մահվանը Նրա հարության զորությամբ և օրեցօր նորոգվենք ու փառքից փառք փոխակերպվենք՝ Փլպ 3:10, Բ Կրթ 3:18, 4:16-18, Եփս 3:21:

© 2022 Living Stream Ministry